

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Ռ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի
գրադարանավարուհի*

Ցարական զորահրամանատարությունը հայկական խմբերի կազմավորմանը ձեռնամուխ եղավ 1914 թ. օգոստոսից: Սկզբնապես թույլատրվեց կազմավորել չորս կամավորական խումբ՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ: Այս խմբերի հրամանատարներ նշանակվեցին հայ ազգային-ազատագրական պայքարի մեջ թրժված ու մեծ հեղինակություն ունեցող խմբապետներ Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Քեռին: Նախնական ծախսերի համար հատկացվեց 3500 ռուբլի գումար, ռազմական ֆոնդից բաց թողնվեց ևս 5100 ռուբլի, որից 4500-ը տրվեց Թիֆլիսի քաղաքապետին Ա. Խատիսյանին, որն այդ ժամանակ Հայոց ազգային Բյուրոյի նախագահի տեղակալն էր: Կամավորականներին հանդերձանքով ու պարենով ապահովելու համար սկսվեց հանգանակության շարժումը, որն ընդգրկեց հայկական բոլոր գաղթավայրերն ու շարունակվեց մինչև Առաջին համապետության վերջին օրերը: Խմբերի անձնակազմերի համար սահմանվեց՝ առաջինի համար 1200 կամավորական, մյուսներինը՝ ոչ ավել քան 400 կամավորական:

Հայկական առաջին կամավորական խումբը (հրամանատար՝ Անդրանիկ) կազմավորվեց 1914թ. հոկտեմբերի 23-ին, Սալմաստում, իր կազմում ունեւ շուրջ 1200 ռազմիկ, հիմնականում կազմված էր արևմտահայերից և գործում էր Կովկասյան բանակի ադրբեջանյան զորաջոկատի կազմում¹: 2-րդ խումբը (հրամանատար՝ Դրաստամատ Կանայան) կազմավորվեց հոկտեմբերի 25-ին Իզդիրում, Բայազետի զորաջոկատի կազմում կազմավորման պահին կար 472 կամավոր, որից 354-ը՝ արևելահայ, 118-ը՝ արևմտահայ: 3-րդը՝ Համազասպի հրամանատարությամբ, կազմավորվեց Կաղզվանում՝ հետևակային պլաստունյան բրիգադի կազմում, սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: Կազմավորման պահին նրա կազմում կար 350 հետևակ և 70 հեծյալ կամավորական: 4-րդ խումբը (հրամանատար Քեռի) կազմավորվեց Սարիղամիշում, 2-րդ Թուրքեստանյան կորպուսի կազմում:

Հայկական կամավորական խմբերի անձնակազմի մասին ամփոփ թվեր չկան: Բերվում են տարբեր թվեր: Հայոց ազգային Բյուրոյի՝ 1914թ. դեկտեմբերի 28-ի նիստում խնդիր դրվեց կամավորների թիվը հասցնել 6000 հոգու: Փոխարքա Վորոնցով-Դաշկովին 1915թ. հոկտեմբերին ուղղված զեկուցագրում Մեսրոպ արքեպիսկոպոսը, Ս. Հարությունյանը, Ա. Խատիսյանը հայտնում էին, որ կազմակերպված է 6 խումբ՝ 5000 հոգանոց անձնակազմով: Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ Գ. Ղորղանյանը բերում է 6000 թիվը, նախնական շրջանում նշելով 2500²:

¹ Գ. Ղորղանյան, Հայերի մասնակցությունը 1-ին համաշխարհային պատերազմի կովկասյան ռազմաճակատի վրա, «Հայրենիք», 1927 թ., թ. 2:

² Այս մասին տես՝ Ս. Կարապետյան, Կամավորական գոմարտակները, էջ 41:

Հայկական կամավորական 4 խմբերում կազմավորման պահին կար 2400 մարդ: 1915թ. գարնան սկզբին հայկական բոլոր խմբերը համալրվեցին նոր կամավորներով: Ապրիլին 2-րդ, 3-րդ, 4-րդ խմբերը միավորվեցին, նրանցից կազմավորվեց Արարատյան զորաջոկատը՝ Վարդանի հրամանատարությամբ, որը հատկապես աչքի ընկավ Վանի գրավման ժամանակ³:

Կամավորական խմբերի կողմից իրականացված մարտական հաջող գործողություններն ու նրանց հսկայական ավանդը Կովկասյան ճակատում զորաշարժերի ընթացքում անվտանգության ապահովման հարցում հնարավորություն տվեցին Հայոց Ազգային խորհրդին Կովկասյան ճակատի հրամանատարությանը ներկայացնել դրանց թիվն ու անձնակազմի քանակը մեծացնելու դիմում: Այն հավանության արժանացավ նաև Կովկասի փոխարքայի մոտ: Այդ ամենի արդյունքում 1915 թ. ապրիլի 6-ին Նիկոլայ 2-րդի կողմից հաստատվում է հայկական կամավորական խմբերի նոր հաստիքացուցակ, որը ստորագրել էր նաև ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Յանուշկիչը⁴: Դրանով սահմանվեց, որ հայկական կամավորական խմբերի անձնակազմերում պետք է լինեն 984 հոգի: 1915 թվականի մայիսին մի առանձին որոշումով էլ թուլյատրվում է կազմավորել ևս երեք կամավորական խումբ: Դրա համաձայն կազմավորվում են Վարդանի, Ջանփոլադյանի և իշխան Արղությանի 5-րդ, 6-րդ և 7-րդ խմբերը: Սա արդեն հայկական կամավորական կազմավորումների ստեղծման երկրորդ գործընթացն էր, որն ավելի դյուրին էր դարձնում հետագայում դրանց հիման վրա ավելի խոշոր զորամիավորումների կազմավորման գործը: Կամավորականների հետ կապված հիմնահարցերին արագ տեղեկանալու ու դրանք արագորեն լուծելու նպատակով Կամավորական շարժման գործերը համակարգող Կարգադրիչ Մարմինը 1915 թ. գարնանը Իզդիրում ստեղծեց կամավորականների մատակարարումներն ու համալրումները համակարգող, «Հայկական շտաբ», որի կազմում էր նաև Սիմոն Վրացյանը⁵:

Հայկական կամավորական գումարտակների ստեղծումը: 1916 թ. գարնանից սկսվում են հայկական կանոնավոր զորամասերի ստեղծման հերթական գործընթացները: Մինչ այդ՝ 1915 թվականի վերջերին ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը որոշել էր տևական ռազմական գործողություններում զգալիորեն նոսրացած խմբերի հիման վրա ստեղծել հայկական ազգային գումարտակներ: Ընդ որում, այս պարագայում հրամանատարական կազմի համար ընտրվում էին կամավորական խմբերում ու ռուսական զորամասերում ծառայող ու հեղինակություն ունեցող սպաներին: Հարկ ենք համարում շեշտել, որ դրանց մեծ մասը մինչ այդ կատարում էին ջոկատների փոխհրամանատարների պարտականությունները: 1916 թվականի մարտի 13-ի կարգադրությամբ կովկասյան ճակատի կորպուսների հրամատարներին տեղեկացվեց ցրման ենթակա կամավորական ջոկատների շտաբների, զենքի, զինամթերքի ու զինվորական հանդերձանքի հիման վրա առանձին հայկական վեց կամավորական գումար-

³ Նշվ. աշխ., էջ 4-9:

⁴ Նշվ. աշխ., էջ 61-62:

⁵ Ս.Վրացյան,

⁶ Նշվ. աշխ., էջ 92-93:

տակներ ստեղծելու հրամանի մասին⁶։ Այս քայլով գլխավոր հրամանատարությունը փորձում էր նաև կանոնավոր բանակին հարիր կարգ ու կանոն մտցնել կամավորականների շրջանում։ Հենց այդ նպատակով էլ գումարտակները համալրվեցին Կովկասյան ճակատի կորպուսներում ծառայող հայ զինվորներով։ Կանոնավոր կամավորական գումարտակներում ամեն ինչ պետք է համապատասխաներ ռուսական բանակի զինվորական կանոնադրությամբ սահմանված պահանջներին։ Սակայն ռուսական հրամանատարության այդ քայլը կամավորականների մի մասին դուր չեկավ, նրանցից շուրջ 3200 հոգի՝ հիմնականում արտերկրից եկածներ, վերադարձան տուն⁷։ Անշուշտ, կամավորականներից շատերին ավելի հոգեհարազատ էր հայդուկային շարժմանը բնորոշ պայմաններում ծառայելը, որը ենթադրում էր, որ բոլոր հրամանները չեն, որ ենթական են պարտադիր կատարման։ Ընդհանուր առմամբ, կամավորական խմբերից կանոնավոր գումարտակներում ծառայության անցան շուրջ 2000 կամավորականներ⁸։

Կամավորական շարժման նշանակությունը կարևորվել ու բարձր էր գնահատվել Թիֆլիսում կայացած Ազգային համախորհրդակցության հոկտեմբերի 10-ի նիստում։ Այդտեղ կամավորական շարժման ու կամավորական կազմավորումների դերն ու նշանակությունը իրադարձությունների հետագա զարգացումներում հանգամանորեն ներկայացրել էր Ն. Աղբալյանը՝ հարկ համարելով անտեղյակներին ներկայացնել դրա ձևավորման շարժառիթները, հանգամանքներն ու հետևանքները։ Նա գտնում է, որ երբ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան որպես հակառակորդ կռվի է դուրս գալիս հայերի դաշնակիցների դեմ, այդ ժամանակ ինքնաբերաբար շարժում սկսվեց հայոց բոլոր խավերում։ Այդ զբաղմունքին համահունչ կամավորական շարժումն ապրել է երկու փուլ՝ սկզբից մինչև 1915թ. ապրիլի 1-ը և մյուս շրջանը՝ մինչև 1916 թ. մարտ ամիսը՝ կամավորական խմբերի կազմացումը և հայկական ազգային գումարտակների կազմավորումը։ Ն. Աղբալյանը շեշտել է, որ կամավորական խմբերը ցույց են տվել զինված աջակցություն թե ռուսական պետությանը և թե դաշնակիցներին, թե պաշտպանողական կռիվներում, թե հարձակողական մարտերում՝ լինելով միշտ առաջավոր դիրքերում։ Նրանք կարևոր դեր են խաղացել հատկապես Սարիղամիշի, Դիլմանի, Ռևանդուզի, Բերկրի-Կալայի, Բիթլիսի, Մուշի, Խնուսի, Վանի, Էրզրումի վճռական ճակատամարտերում⁹։ Արժանազրեւով, որ կամավորներն ապացուցեցին «հայերի զինվորական կազմակերպվածության ոգին, ժողովրդի հոգեկան կորովը», Ն. Աղբալյանը կամավորական շարժման արդյունքներն ամփոփեց հետևյալ բանաձևով. «Այդ շարժումով հայ ժողովուրդն ապրեց 3 տարի»¹⁰։ Դա բարոյական վերածննդի շրջան էր հայ ժողովրդի համար։ 10 000-անոց անձնվեր բանակ հանել՝ մեր պատմության մեջ եզակի երևույթ է։ Վերջին դարում կորովազուրկ հայ ժողովրդը առաջին անգամ էր այդքան մեծ, կազմակերպված ուժ և կորով ցուցաբերում։ Անդրադառնալով կամավորականների մարտական պատ-

⁷ Մ. Կարապետյան, Հայկական բանակը.../, էջ 17։

⁸ Նշվ. աշխ., էջ 93-94։

⁹ Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, էջ 84։

¹⁰ Տես՝ Մ. Կարապետյան, Կամավորական գումարտակները, էջ 40-43։

րաստվածության հարցերին, Աղբալյանը համախորհրդակցության մասնակիցներին տեղեկացրել է, որ եթե նախկինում միայն ենթադրվում էր, թե մենք կարող էինք պետականորեն կազմակերպվել ու պաշտպանվել, ապա հիմա մենք ունենք արդեն դրա ապացույցը: «Հայ ցեղը կարող է կազմակերպված պաշտպանել իր երկիրը, ցուցաբերել ռազմական ոգի և ուժեղացնել հայի ինքնագզացումը: Կամավորական շարժման մի շարք թերություններ նսեմանում են այս մեծ, դրական կողմերի առաջ, իսկ մնացածը պատկանում է պատմությանը:

Նախկին յոթ խմբերի կազմացման ու նոր գումարտակների կազմավորման գործընթացներն ավարտվեցին բավականին սեղմ ժամկետներում ու կովկասյան ճակատի և Հայոց Ազգային Բյուրոյի սերտ համագործակցության պայմաններում: Պատմական գիտությունների դոկտոր Մուրադ Կարապետյանի հավաքած տվյալներից տեղեկանում ենք, որ հայկական գումարտակներն արդեն 1916 թ. հունիսին պատրաստ էին մասնակցելու ռազմական գործողություններին, ընդ որում, առաջին հրաձգային գումարտակը կազմավորվել էր Էրզրումում, իսկ հրամանատար նշանակվել էր փորձառու գնդապետ Պողոս Բեժանբեկյանը: Գումարտակի հիմնական կազմը դարձել էին նախկին երկրորդ կամավորական խմբի զինվորները, բացի այդ՝ 39-րդ դիվիզիայի յուրաքանչյուր զնդից հավաքագրվել էր բացառապես հայերից կազմված մեկական հրաձգային վաշտ: Ձենքով, ռազմամթերքով ու զինվորական հանդերձանքով այն կոմպլեկտավորված էր ծայրահեղ անբավարար, իսկ զնդացրային ջոկատն էլ կազմավորվեց միայն 1917թ. վերջերին¹¹: 2-րդ գումարտակը կազմավորվել էր Ջուլֆայում՝ հրամանատար՝ գնդապետ Ս. Սամարցյան, 3-րդը՝ Մարանդում՝ հրամանատար գնդապետ Տեր-Նիկողոսյան¹²: 4-րդ գումարտակը՝ հրամանատար փոխգնդապետ Արտեմ Հովսեփյան, նույնպես կազմավորվել էր Մարանդում: Այս գումարտակի սպայական կազմը հիմնականում կազմված էր 2-րդ Թուրքեստանյան կորպուսի կազմում եղած հայ զինվորականներից, իսկ շարային մասի կորիզն էլ կազմում էին Խանասորի Վարդանի հրամանատարության ներքո եղած նախկին հայկական կամավորական հինգերորդ ջոկատի զինվորները՝ ընդհանուր թվով երեք հարյուր կամավորական: Գումարտակի համալրման համար հայ զինվորներ են հավաքագրվել ինչպես ճակատում եղած, այնպես էլ թիկունքում տեղակայված զորամասերից¹³: 5-րդ գումարտակը կազմավորվեց Մարանդում՝ հիմնականում Ալեքսանդրապոլում տեղակայված զորամասերի հայ զինվորներից: Այս գումարտակի կազմի մեջ մտան նաև Քեռու 4-րդ կամավորական խմբի մնացորդները՝ 130 կամավորական, իսկ հրամանատար էլ նշանակվեց գնդապետ Պողոս Բեկ-Փիրունյանը¹⁴: 6-րդ գումարտակը՝ հրամանատար՝ փոխգնդապետ Միքայել Մելիք-Մուրադյան, կազմավորվել էր Ուրմիայում¹⁵: Ինչպես տեսնում ենք, այս գումարտակների հրամանատարներն արդեն ոչ թե հայդուկային ջոկատների հրամանատարներն են, այլ ռուսական բանակի ռազմական ակադեմիաներն ավար-

¹¹ Նշվ. աշխ., էջ 94-95, 273-274, 281:

¹² Նշվ. աշխ., էջ 94-95:

¹³ Նշվ. աշխ., էջ 285:

¹⁴ Նույն տեղում, էջ 301-302:

¹⁵ Նշվ. աշխ., էջ 94-95:

տած, ծառայողական ու մարտական հսկայական փորձ կուտակած, մարտերում կոփված կադրային զինվորականները: Ընդ որում, դրանց մի մասը, օրինակ՝ գնդապետ Պողոս Բեժանբեկյանը, ուներ նաև շտաբային ծառայության ու զորամասերի կազմավորման աշխատանքների փորձ:

Հայկական գումարտակների կոմպլեկտավորումը 1916 թվականի հունիսի վերջերին արդեն հիմնականում ավարտվել էր ու դրանք բոլորն էլ պատրաստ էին մասնակցելու այդ օրերին սկսված ռուսական բանակների ընդհանուր հարձակմանը Կովկասյան ճակատում: Այս վեց գումարտակներն էլ մինչև ակտիվ ռազմական գործողությունների ավարտը գտնվում էին ճակատի առաջավոր դիրքերում ու իրենց մասնակցությունն էին բերում մարտական խնդիրների լուծման հետ կապված բոլոր գործողություններում: 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ հայկական այդ վեց հրաձգային գումարտակներում ծառայում էին 5179 զինվորական, այդ թվում՝ 174 սպա¹⁶:

Հայկական գումարտակներից առաջինը կռվում էր Երզնկայի ուղղության զորքերի կազմում, իսկ 1917 թ. օգոստոսի սկզբներից էլ ճակատի այդ նույն հատվածում կատարում էր պահակային ծառայություն: Հայկական մյուս հրաձգային գումարտակները կռվում էին Բաղդադի ուղղությամբ հարձակված ռուսական կորպուսների կազմում: Ընդ որում, դրանցից երեքը գտնվում էին 7-րդ հեծյալ կորպուսի կազմում ու հսկայական դեր են ունեցել Ուրմիա լճի հարավ-արևելյան ուղղություններում իրականացված մարտական գործողություններում: Չնայած տևական մարտերի ընթացքում կրած նշանակալից կորուստներին, 1917 թ. հունվարի սկզբներին հայկական գումարտակների կազմում կար 5179 մարդ, որից 176-ը՝ սպա¹⁷: Ռուսական զինվորական կազմավորումներին ամեն ինչով համապատասխանող այս գումարտակներն արդեն իսկ կարելի է համարել ապագա հայկական բանակային կորպուսի սաղմը՝ այնքանով, որքանով որ այս կազմավորումներն, ի տարբերություն նախկին կամավորական խմբերի, զերծ էին հայդուկային շարժումներից մասնակցած կամավորականներին բնորոշ թերություններից, որոնք առաջին հերթին արտահայտվում էին զինվորական կանոնադրությունն ու մարտավարության ընդունված պահանջները արհամարհելով, բարձր հրամանատարության հրամաններին չենթարկվելով և այլն, ինչը հարկի չէր կանոնավոր բանակի զինծառայողին:

1917 թ. փետրվարի 27-ին Ռուսաստանում տեղի ունեցավ բուրժուադեմոկրատական հեղափոխություն, որի հետևանքով տապալվեց միապետությունը: Ստեղծվեց ժամանակավոր կառավարություն՝ իշխան Գ. Լվովի նախագահությամբ: Հեղափոխության ընթացքում կազմավորվել էր նաև բանվորների և զինվորների պատգամավորների Պետրոգրադի խորհուրդը, որը նույնպես իշխանության մարմին էր:

1917 թ. մարտի 6-ին Թիֆլիսի քաղաքային դուման ձևավորեց տեղական իշխանության մարմիններ՝ գործադիր կոմիտե և բյուրո, որն իր հրապարակած կոչում պաշտպանեց ժամանակավոր կառավարության կողմից պատերազմը շարունակելու հայտարարությունը:

¹⁶ Նշվ. աշխ., էջ 95:

¹⁷ Նշվ. նշխ., էջ 95:

THE MAIN PROCESS OF THE FORMATION OF VOLUNTARY GROUPS

R. S. HARUTYUNYAN

From the beginning of the formation of voluntary groups further development of the process and especially the re-establishment of the Armenian State System in May 28, 1918 gave the opportunity of having an army in the first months of independence. It is also important to emphasize that the officers staff had an experience of many years which was shown by the Armenian military units and which became the nucleus of the Armenian National Army.

ОСНОВНЫЕ ПРОЦЕССЫ ФОРМИРОВАНИЯ ДОБРОВОЛЬНЫХ ГРУПП

Р. С. АРУТЮНЯН

Начиная с формирования добровольных групп, дальнейшее развитие процессов и особенно восстановление государственности в Армении 28 мая 1918 года создали возможность в первые же месяцы независимости иметь национальную армию. Безусловно, важно отметить, что офицерский состав имел многолетний боевой опыт, который неоднократно демонстрировали военные подразделения армянского армейского корпуса, ставшие ядром армянской национальной армии.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Դ. ԱՓԷՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի Հայաստանի
հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ*

ԽՍՀՄ փլուզումից հետո ամենաքննարկվող հարցադրումներից մեկը դարձավ Ռուսաստանի գերտերությունը, թե ընդամենը մեծ պետություն լինելու կարգավիճակի հարցը: Աշխարհագրորեն այն այսօր էլ շարունակում է մնալ աշխարհի ամենամեծ, իսկ բնական պաշարներով՝ ամենահարուստ երկրներից մեկը, որն իր աշխարհագրական դիրքով կամրջում է Արևելքն ու Արևմուտքը, Հարավն ու Հյուսիսը: Աշխարհագրական համեմատական բարվոք տեղաբաշխվածությունը, բնական պաշարների առատությունը, մշակակալի ռազմական, ռազմարդյունաբերական և ռազմավարական սեզմենտի առկայությունը, համաշխարհային քաղաքականությունում հակակշիռ մեխանիզմի գործառույթ իրականացնելու կարողությունը հուշում են, որ նա «պարտավոր» է լինել գերտերություն: Ինչպիսին էլ որ լինեն նորօրյա Ռուսաստանի վերաբերյալ հնչեցված բազմապիսի գնահատականները, մի բան ակնհայտ էր. վերջինս վաղ թե ուշ ստիպված է վերագնահատելու և վերագտնելու սեփական ինքնությունը: